ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

12 սեպտեմբերի 2014թ. **N 20-Ա**
ք.Երևան

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ, ԱՐԱՐԱՏԻ, ԱՐՄԱՎԻՐԻ, ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ, ԿՈՏԱՅՔԻ, ԼՈՌՈՒ, ՇԻՐԱԿԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՄԵՐՈՒՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի N 14-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել, որ.

1) Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի և Վայոց ձորի մարզերի մի շարք համայնքներում 2014 թվականի հոկտեմբերի 19-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնները Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 30-ի N 14-Ն որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով,

2) տեղամասային ընտրական հանձնաժողովներում հանձնաժողովի նախագահների և քարտուղարների պաշտոններն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև բաշխվել են հետևյալ համամասնությամբ՝

Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)՝ 8-ական,

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)՝ 6-ական,

Հայ ազգային կոնգրես կուսակցությունների դաշինք (ՀԱԿ)՝ 1-ական,

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)՝ 1-ական,

«Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)՝ 1-ական,

«Ժառանգություն» կուսակցություն (ԺԿ)՝ 1-ական,

ա. տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնները ըստ ընտրական տեղամասերի, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի միջոցով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի միջև համապատասխանաբար բաշխվել են՝

Համայնքի անվանումը	ՏԸՀ	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար
Նոր Ամանոս	15/1	ՀՀԿ	ԲՀԿ
Դալար	17/1	ԲՀԿ	ՀՀԿ
Դալար	17/2	ՀՀԿ	ԲՀԿ
Գետաշեն	21/1	ԲՀԿ	ՀՀԿ
Շենավան	21/1	ՀՀԿ	ԲՀԿ
Դդմաշեն	23/1	ՀՀԿ	ԲՀԿ
Մաքենիս	24/1	ԲՀԿ	ՀՀԿ
Ներքին Գետաշեն	24/1	ՀՀԿ	ՀԱԿ
Ներքին Գետաշեն	24/2	ՀԱԿ	ՀՀԿ
Ներքին Գետաշեն	24/3	ՀՀԿ	ԲՀԿ
Ներքին Գետաշեն	24/4	ԲՀԿ	ՀՀԿ
Զորավան	26/1	ՀՀԿ	ՀՅԴ
Զյունաշող	32/1	ՀՀԿ	ԲՀԿ
Արեվիկ	35/1	ԲՀԿ	ՀՀԿ
Լուսակերտ	36/1	ՀՅԴ	ՀՀԿ
Հովտաշեն	36/1	ԲՀԿ	ՀՀԿ
Գնիշիկ	39/1	ԺԱՌԱՆԳ.	ՕԵԿ
Սերս	39/1	ՕԵԿ	ԺԱՌԱՆԳ.

3) սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են 2014 թվականի սեպտեբերի 19-ից մինչև սեպտեմբերի 24-ը, մինչև՝ ժամը 18:00-ն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**